

5 Քանզի Սարգսի համբաւ պայծառ,
Գուն հանճարեղ քաջաբարբառ,
Զրգեալ առ նա զլզգիս կաճառ՝
Գոյանայր միշտ հեռից պատճառ:

6 Այլ նա յաշնան այնրր տարւոյ
Զուեալ անտի լինէր ուղւոյ
Առ Պրորուսա Բիւթանիոյ,
Ուր ժամանէր ողջ ի կարծոյ:

7 Անդանօր իսկ ազգ մեր բարի
Ընդ գալն որոյ լեալ հրճուալի
Գուն գործելով սիրով սըրտի՝
Յարգեալ պատուէր ըզնա կարի:

8 Անդր առաջնորդ էր յայնմ վայրի
Գէորգ բաբուն Հաբանդեցի,
Որ Պատրիարգ լեալ նախ Պօլսի
Յետոյ յայն գահ փոխիւր անտի:

9 Սոյն սա գոլով այր մարդասէր,
Քաղաքավար եւ հիւրասէր,
Առ ինքն առեալ զՍարգիս սիրէր,
Գործով բանիւ պատուով յարգէր:

10 Զայս ինչ լըւեալ ունկն ահագնի
Առաւելոյր հեռն սըրտի,
Ընդդէմ Սարգսի իւր դասակցի
Եւ ըստ հոգւոյն հարազատի:

11 Ուստի գրրէր առ նախանձու
Պատրիարգին Տեառն Յակոբու,
Թէ ի մօտոյ Սարգիս առնու
Զաթոռդ ի քէն քեզ լեալ վըշտաու: